

Արվեստի, արհեստների եւ գրոսաշրջութեան տեղեկատվական կենտրոն



Շուշի քաղաքի զարգացման նոր հայեցակարգն առաջարկում է քաղաքի տնտեսական աշխուժացման միջոցառումները կենտրոնացնել մի քանի առանցքների կամ ճառագայթների շուրջ: Այդ առանցքներից մեկը Զբոսաշրջութեան, առողջարանային և համագումարների թաղամասն է:

Այս առումով կարևոր է Շուշիում Արվեստի, արհեստների և գրոսաշրջութեան կենտրոնի հիմնումը, որի համար ԼՂՀ իշխանությունները Հիմնադրամին հատկացրել են նախկին ավտոկայանի շենքը, և հարակից Զրաբերդի հրապարակի բարեկարգումը: Կենտրոնի շինարարական և ձևավորման աշխատանքներն ավարտվել են: Կենտրոնում գործելու է ԼՂՀ գրոսաշրջութեան կենտրոնը, բացվելու է ցուցասրահ: Հրապարակում տեղադրվելու են ավանդական արհեստների տաղավարներ:

Ծրագիրը հետապնդում է հետևյալ հիմնական նպատակները՝ բարձրացնել Շուշի քաղաքի գրավչությունը գրոսաշրջիկների և ներդրողների համար, զարգացնել քաղաքի սպասարկման ոլորտը, վերականգնել քաղաքի ավանդական արհեստները, քաղաքում ստեղծել 25 մշտական աշխատատեղ: Ծրագրով նախատեսված բոլոր ներդրումները՝ շենք/շինությունների վերանորոգում, վերակառուցում, տարածքի արտաքին և ներքին ձևավորում, կահավորում, իրականացվում են «Շուշի վերածնունդ» հիմնադրամի կողմից: